իմ ԳՐԱԴԱՐԱՆԸ

# ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2012

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ՆԱԽԱԲԱՆ** ... 3

**ՕՎԼԵՏԻՔ ԽՄԱՀԱԿՅԱՆ** ... 5

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ... 7
ՄԻ ՄՐԱՀՈՆ ԱՂՋԻԿ ՏԵՍԱ ... 7
ՌՈՒԽԼԵՆՆԱՑՈՒՄ ... 8
ՄԵՐ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ ... 9
ՍԻՐՏՍ ԵՐԿԻՆՔ Է ... 10
ԵՍ ԵՐԳԻՉ ԵՄ ... 10
ՏԻԵԶԵՐՔԻ ՊԵՐՃ ՀՅՈՒՍՎԱԾՔՆ ԵՄ ... 10
ԴԱՐԴՍ ԼԱՑԵՔ, ՍԱՐԻ ՄՄՌՈՒԿ ... 11
ՄԱՅՐԻԿԻՍ ... 12
ՄԱՃԿԱԼ ԵՍ, ԲԵԶԱՐԱԾ ԵՍ ... 13
ԳԻՇԵՐՆ ԵԿԱՎ, ԶՈՎ-ՀՈՎՆ ԸՆԿԱՎ ... 14
ՍԵՎ ԱՉԵՐԵՆ ՇԱՏ ՎԱԽԵՑԻՐ ... 14
ՍԻՐԵՑԻ, ՅԱՐՍ ՏԱՐԱՆ ... 15
ՍԵՎ-ՄՈՒԹ ԱՄՊԵՐ ՃԱԿՏԻԴ ԴԻԶՎԱՆ ... 15
ԷՅ, ՋԱՆ-ՀԱՅՐԵՆԻՔ, ԻՆՉՔԱՆ ՍԻՐՈՒՆ ԵՍ ... 16
ԱՐԱԶԻ ԱՓԻՆ ԲՈՍՏԱՆՍ ԼԻՆԻ ... 17
ՈՐՄԿԱՆ ԱԽՊԵՐ, ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱՍ ... 17
ԵՍ ՁԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ՝ ԿԸԳԱ ՈԳՈՒ ՍՈՎ ... 18
ՕՏԱՐ, ԱՄԱՅԻ ՃԱՄՓԵՔԻ ՎՐԱ ... 19
ՇԱՏ ՄԻ ՏԽՐԻՐ, ՇԱՏ ՄԻ ԽՆԴԱՐ, ՍԻՐԵԼԻՍ ... 19
ՔՈՒ՛ՅՐ ԻՄ ՆԱԶԵԼԻ, ՆԱՅԻՐ ՔՈ ԴԻՄԱՑ ... 20
ԷՅ, ԴՈՒ, ՋԱՀԵԼ, ՀՊԱՐՏ ՀԱՍԱԿ ... 21
ԵՐԱԶ ... 21
ԳԵՏԱԿԻ ՎՐԱ ... 22
ԿՏԱԿ ... 22
ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ... 23
ՀԱՅՐԵՆԻ ԾՈՒԽԸ ... 24
ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ... 25
ԲԻՆԳՅՈԼ ... 26
ՌԱԶՄԱԿՈՉ ... 27
ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐԸ ... 29

ԱԽԼԻԿԻՆ ........ 30
ԿՅԱՆՔԻՑ ԹԱՆԿ ԲԱՆԸ ........ 31

**ԱՌԱԿՆԵՐ** ........ 31
ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԵՐԸ ........ 33

**ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԴՆԵՐ** ........ 33
ԱՄՊԵՏԻ ՍԵՐԸ ........ 38
ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ ........ 40
ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ ........ 47
ՄԱՅՐԸ ........ 48
ՄՈՐ ՍԻՐՏԸ ........ 50
ԺՈՂՈՎՐԴԻ ՔՆԱՐԸ ........ 52

**ՊՈԵՄՆԵՐ** ........ 57
ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ ........ 57
ԱՐԱԳԱԾԻՆ ........ 87
ՍԱՍՄԱ ՄՀԵՐ ........ 88

**ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ** ........ 123
ԱՐԾՎԱՄԱՆՈՒԿ ........ 123
ԼԻԼԻԹ ........ 135

**ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊՈԵՄՆԵՐ** ........ 163
ԵՐԳԻ ՀՐԱՊՈՒՅՐԸ ........ 163
ՍԳԱՎՈՐ ԱՐԱԳԻԼԸ ........ 166
ՍԱԱԴԻԻ ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆԸ ........ 169

**ՀԵՔԻԱԹՆԵՐ** ........ **175**
ԱՄԵՆԱԶՊԻՏԱՆԻ ԲԱՆԸ ........ 175
ԱՐԵՎԻ ՄՈՏ ........ 178
ԱՂԱ ՆԱԶԱՐ ........ 181

**ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ** ........ 197
ԳԱՐԻԲԱԼԴԻԱԿԱՆԸ ........ 197
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ ........ 205
ԵՐԶԱՆԻԿ ԽՐՃԻԹԸ ........ 210
«ՀԱՄԲԵՐԱՆՔԻ ՉԻԲՈՒԽԸ» ........ 213
ԱՆՊԱՐՏԵԼԻ ՈԳԻՆ ........ 228
ՕՋԱԽԻ ԾՈՒԽԸ ........ 231

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Մի մրահոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամուրջին,
Հորդ մազերը – գետ գիշերվա,
Եվ հակինթներ՝ ականջին:

Աչքերը սև – արևներ սև,
Արևների պես անշեջ.
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծվածի,
Հավերժական կանացի:

Միամիտ չեմ՞ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի.–
Մի մրահոն կույս էր քեզ պես,
Կոտրեց սիրտս պատանի...

# ՌԱՎԵՆՆԱՅՈՒՄ

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել։

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել ադամանդին
Ու անցել։

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին
Ու անցել։

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեգ ճակատին
Ու անցիր...

08.VI.1926թ. Վենետիկ

# ԱՐԵՎԻ ՄՈՏ

Մի որբ երեխա՝ ցնցոտիներ հագած՝ կուչ էր եկել հարուստ տների պատերի տակ: Մեջքը հենել էր մի հարուստ տան պատին և մեկնել էր ձեռքը դեպի մարդիկ: Նոր էր բացվել գարունը, մոտակա սարերը կանաչին էին տալիս, և գարնան անուշ արևը բարի աչքերով էր նայում ամենքին: Մայթերով անցուդարձ էին անում մարդիկ, և ոչ մի մարդ չէր նայում, չէր ուզում նայել խեղճ ու որբ երեխային: Երբ արևը կամաց-կամաց թեքվում էր մոտավոր կանաչ սարերի հետևը, սկսեց փչել մի ցուրտ քամի, և երեխան դողում էր՝ խեղճ ու անտուն:

–Ախ, կարմիր արև, բարի՜ արև, դու էիր միայն ինձ տաքացնում, հիմա ո՞ւր ես գնում, թողնում ես ինձ մենակ՝ այս ցրտին ու խավարին. ես մայր չունեմ. ես տուն չունեմ, ու՞ր գնամ, ու՞մ մոտ գնամ... Վեր առ, տար ինձ քեզ հետ, անու՜շ արև...

Լալիս էր երեխան լուռ ու մունջ, և արցունքները գլոր-գլոր սահում էին նրա գունատ երեսից: Իսկ մարդիկ տուն էին դառնում, և ոչ ոք չէր լսում ու տեսնում նրան, ոչ ոք չէր ուզում լսել ու տեսնել նրան...

Արևը սահեց անցավ սարի մյուս կողմը, և էլ չերևաց: –Բարի՜ արև, ես գիտեմ, դու գնացիր քո մոր մոտ... Ես գիտեմ, ձեր տունը մյս սարի հետևն է, ես կգամ կգամ քեզ մոտ, հիմա, հիմա...

Եվ խեղճ երեխան դողալով՝ հարուստ տների պատերը բռնելով, գնաց, գնաց, քաղաքից դուրս եկավ: Հասավ մոտավոր սարին. դժվար էր վերելքը, քարեր ու քարեր, ոտքը դիպչում էր քարերին, խիստ ցավում. բայց նա ուշադրություն